

կը կենար, կարծես թէ անոր շուքին տակ կ'ուզէր պահուրտիլ: Իրմէ ետքը՝ երկու բարձրահասակ երիտասարդներ մտան, երեսներն արեւէն էրած, աչքերնէն հպարտութիւն և յանդգնութիւն կը ցատէր, և աներես համարձակութիւն մը կը ցուցնէին: Օրսոյի միտքը հին յիշատակներ արթնցան՝ երբ կանաչ ակնոցով ծերը տեսաւ, որ Պարրիշինի փաստաբանն էր՝ Բիէզրանէրայի գեղապետը, և եկեր էր երկու տղոցը հետ՝ քաղաքապետին պալատի մը լըսել տալու համար: Շատ դժուարին է նկարագրել Օրսոյի զգացածն այն վայր կենին. այսչափ յայտնի է՝ որ հօրը թըշնամոյն ներկայութիւնը տեսակ մը սոսկումն ձգեց վրան, և առաջին անգամ այն կասկածներուն տեղիք տուաւ՝ զորոնք ինչուան այն ատեն չէր ընդունած:

Երբոր Աղանիի աչքին ալ երեցաւ այն մարդն՝ որուն մահացու ոխ պահած էր, կերպարանքն այլայլեցաւ, երեսին գոյնը գնաց, ձայնը խղղուեցաւ, սկսած տողը շրթանցը վրայ մեռաւ... բայց քիչ ետքը՝ ներքին թափով մը շարունակեց:

« Երբոր բազէն կ'ողբայ — իր դատարկացած բոյնին վրայ, — տարմերը (ՏԽ՝ սըղըրճը) չորս դին կը թռչտին — և կը խնտան անոր թշուառութեանը վրայ: (Այս տեղը նոր եկած երկու երիտասարդները քթերնուն տակէն խնտացին, անտարակոյս յանդուգն կ'երևար իրենց այդ այլաբանութիւնը): — Բազէն անշուշտ կ'արթընայ, — թուերը կը տարածէ, — կտուցը արեան մէջ կը լուանայ: — Եւ դու, Կարողա Մկրտիչ, բարեկամքդ — վերջին բարենին տան քեզի: — Բաւական արցունք վազցուցին իրենք: — Խեղճ որք աղջիկը միայն չար. — և ինչո՞ւ համար լայ վրագ: — Դու պարարտ օրերով մտար մահուան անկողինը, — ազգատոհմիդ աչքին առջև, — և պատրաստուած էիր ելլալու — Ամենակարողին առջև: — Որք աղջիկն իր հօրը վրայ կուլայ, — զոր ցած աւազակներ յանկարծակիի բերելով, — կռնակէն զարկին դանակը. — կանաչ տերևներու տակ — դու իր կարմիր արիւնը կեցած է: — Բայց որքն անոր արիւնը ժողված է, այն ազնուական և անմեղ արիւնը, — և Բիէզրանէրայի վրայ թափեց, — որպէս զի մահացու թոյն ըլլայ: — Եւ Բիէզրանէրա դրոշմուած պիտի մը-

նայ — մինչև որ մեղապարտ արիւնը — անմեղ արեան հետքը ջնջէ »:

Աղանի աթոռի մը վրայ ձգեց ինքզինքը, մեծօտն դէմքին վրան առաւ եւ սկսաւ հեծել և ողբալ: Մէկէն քովը ժողովուեցան լալազին կանայք. էրիկ մարդկանցմէ ոմանք վայրագ աչքով գեղապետին և իրեն որդուց վրայ կը նայէին. ծերերէն ոմանք կը տրտնջային անոնց ասանկ չփոթութեան պատճառը լլալուն վրայ: Մեռնողին որդին ճեղքեց բազմութիւնն՝ որպէս զի երթայալ զաչ գեղապետին որ մէկէն դուրս ելլէ: Բայց անիկայ քան զինքն առաջ աճապարեւ էր ելլելու, և երկու որդիքն արդէն փողոցն էին: Քաղաքապետը քաղաքավարական ցառակցութիւններ ընելէն ետքը երիտասարդ Բիէզրիին, անոնց ետեւէն դուրս ելաւ: Իսկ Օրսոյ քրոջը քով մօտեցաւ, թեւէն բռնեց և սենեկէն դուրս հանեց: — Ընկերեցէք իրենց, ըսաւ Բիէզրի իր բարեկամներէն մէկ երկուքին, աղէկ նայեցէք որ փորձանք մը չգայ գլուխներն: Երկու իրեք երիտասարդ մէկէն դանակներն զգեստնուն ձախ դրականը դրին, և տարին զՕրսոյ ու իր քոյրը մինչև իրենց տան դուռը:

Հետևեալը գալ բերրով:

ՈՒՂՂԱԳՐԵԼԻՔ

յափաթեցին հոգեմեքի

էջ 306	« Ինչո՞ւ »	Յարօնոյ	Տարօնոյ
» 310	»	891ին	891ին
» 321		THΣ	ΓHΣ